ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Մ.Փաշայանի ք.Բրատիսլավա (Սլովակիա) և ք.Բուդապեշտ (Հունգարիա) կատարած պաշտոնական գործուղման

1. **Անուն, ազգանուն**

   Միքայել Փաշայան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   ք.Բրատիսլավա, 2018թ. հունիսի 25-ից 27-ը
   ք.Բուդապեշտ, 2018թ. հունիսի 28-ից 29-ը

4. **Հրավիրող կողմը**

   Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն (ՀՄՆԿ – IOTA)
   Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ-OECD)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

   Մասնակցություն Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության 22-րդ վեհաժողովի աշխատանքներին
   Մասնակցություն ՏՀԶԿ-ի Հարկային վարչարարության ֆորումի հովանու ներքո Ռուսաստանի Դաշնային հարկային ծառայության և Հունգարիայի ազգային հարկային ու մաքսային ադմինիստրացիայի կողմից համատեղ կազմակերպված սեմինարին

6. **Քննարկված թեմաները՝**

   2018թ. վեհաժողովի տեխնիկական նստաշրջանի թեման է՝ «Թվայնացման ազդեցությունը հարկային վարչարարության վերափոխման վրա»:
   ՏՀԶԿ-ի սեմինարի թեման է՝ «Առցանց ՀԴՄ-ներ»

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

   1) Բրատիսլավայում կայացած ՀՄՆԿ վեհաժողովին ներկա էին ավելի քան 200 պատվիրակներ ՀՄՆԿ-ին անդամակցող հարկային մարմիններից, բարձրաստիճան պաշտոնյաներ Սլովակիայի կառավարությունից, Եվրոպական Հանձնաժողովից,

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունից, Հարկային մարմինների ներամերիկյան կենտրոնից (CIAT), Արժույթի միջազգային հիմնադրամից, Համաշխարհային Բանկից, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, հարկային ոլորտի փորձագետներ և գիտական աշխատողներ: 22-րդ վեհաժողովի նստաշրջանը բաղկացած էր 2 մասից՝ վարչական և տեխնիկական:

Վարչական նիստի ընթացքում քննարկվել և որոշումներ են ընդունվել մի շարք կազմակերպչական հարցերի շուրջ, այդ թվում՝ կազմակերպության 2019թ. աշխատանքային ծրագրի, գալիք ժամանակաշրջանի բյուջեի, կազմակերպության նախագահի, գործադիր խորհրդի և գործադիր քարտուղարի ընտրության մասին հարցերը, որին մասնակցել է նաև հայկական պատվիրակությունը: Բելգիայի հարկային ծառայությունն ընտրվել է որպես 2018-2019թթ. համար ՀՄՆԿ-ի նախագահող մարմին: Համապատասխանաբար՝ ՀՄՆԿ 23-րդ Գլխավոր վեհաժողովը տեղի կունենա Բելգիայում: ՀՄՆԿ Գործադիր կոմիտեի նոր անդամներ են ընտրվել՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Լիտվայի, Սլովակիայի, Շվեդիայի, Միացյալ Թագավորության և Վրաստանի հարկային մարմինները:

Վեհաժողովի ընթացքում կայացել են երկկողմանի հանդիպումներ օտարերկրյա հարկային մարմինների պատվիրակությունների ղեկավարների հետ, այդ թվում՝

- ՀՄՆԿ գործադիր տնօրեն Մ.Պինտոյի,
- Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության ղեկավար Գ.Տաբուաշվիլիի,
- Արժույթի միջազգային հիմնադրամի ֆիսկալ հարցերի դեպարտամենտի խորհրդատու Խ.Տորոյի հետ, և այլն:

Մասնավորապես՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել ակտիվացնելու ՀՄՆԿ-ի, ինչպես նաև Ուկրաինայի և Վրաստանի հարկային մարմինների հետ համագործակցությունը:

2) Բուդապեշտում անցկացված սեմինարի ընթացքում երկկողմանի հանդիպում է կայացել ՌԴ դաշնային հարկային ծառայության ղեկավար Մ.Միշուստինի հետ, որի ընթացքում կողմերը կարծիքներ են փոխանակել երկկողմանի համագործակցության հեռանկարների վերաբերյալ, մասնավորապես, էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերի փոխադարձ ճանաչման հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.
Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

1) Բրատիսլավայում կայացած ՀՄՆԿ վեհաժողովի ինը նստաշրջանների ընթացքում, ներառյալ՝ հիմնական զեկույցները, ցուցադրությունները եւ քննարկումները, հնարավորություն ընձեռվեց քննարկել հարկային մարմինների անցումը թվային տեխնոլոգիաներին, վերջիններիս կիրառման ազդեցությունը հարկային վարչարարման

տարբեր օղակների վրա և այդ գործընթացում առկա մարտահրավերները ու հնարավոր հետևանքները: Միջոցառման ընթացքում կազմակերպվել են մի շարք ինտերակտիվ և օրինակների ուսումնասիրման նստաշրջաններ, որոնց ընթացքում ցուցադրվել են հարկային ոլորտում կիրառելի նորագույն տեխնոլոգիական միջոցներ, որոնք կարող են դյուրացնել հարկային մարմինների անցումը թվային տեխնոլոգիաներին:

Վեհաժողովի տեխնիկական մասի ընթացքում անց է կացվել թվային գործիքների և դրանց կիրառման պրակտիկային նվիրված ցուցահանդես, որտեղ պատվիրակները գնահատեցին հարկային նորարարությունների ոլորտի վերջին միտումները, ինչպես նաև առաջադեմ տեխնոլոգիական լուծումները, որոնք հնարավորություն են տալիս հարկային մարմիններին օպտիմալացնել և արդիականացնել հարկ վճարողներին մատուցվող ծառայությունները և, միաժամանակ, մնալ ծախսարդյունավետ ու նվազեցնել հարկային օրինապահության պահպանման ծախքերը: Զուգահեռ անցկացվող երեք նիստերի ժամանակ քննարկվել են հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների թվայնացման գործում առկա առանցքային խնդիրները և հարկային մարմինների լավագույն փորձը: Ներկայացվել է նաև ՀՀ ՊԵԿ-ի իրագործած նորարական ծրագրերին նվիրված շնորհանդեսը՝ «Մեծ ծավալի տվյալների վերլուծությունը որպես հարկային վարչարարության գործիք» (Big Data Analysis as an Effective Tool for Tax Administration) վերնագրի ներքո:

Վեհաժողովի տեխնիկական մասի ընթացքում կայացած քննարկումները հանգեցրել են հետևյալ եզրակացությունների.

1. Ամբողջ աշխարհում հարկային մարմինները զգում են թվայնացման ազդեցությունը, որը վարչարարական գործառնությունները տեղափոխում է թվային տարածություն և թույլ տալիս օգտագործել տարբեր տեսակի առցանց կամ թվային գործիքներ, մատուցել ամբողջապես էլեկտրոնային ծառայություններ, գործադրել էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրեր, էլեկտրոնայնացնել հարկ վճարողների հետ հաղորդակցությունը, և այլն.
2. Անցումը թվային տեխնոլոգիաների պետք է իրականացվի հարկային մարմնի բոլոր կառույցներում, որպեսզի աշխատակիցները գիտակցեն այդ տեխնոլոգիաների հնարավորություններն ու օգուտները: Թվայնացումը մեծ ներդրում է հարկային վարչարարության զարգացման գործում և այդ ներդրման համար պահանջվում է կայուն եկամուտ.
3. Թվային տեխնոլոգիաները վերափոխում են հարկային վարչարարության գործառույթները, ապահովում են անցումը հարկերից խուսափումը և խարդախություն հայտնաբերումը խթանող՝ արհեստական հետախուզության վրա հիմնված լուծումներից դեպի վիրտուալ օգնականների և հաճախորդներին աջակցելուն ուղղված ռոբոտային տեխնոլոգիաների կիրառման, անցումը բջջային ծառայությունների մատուցման մեջ ձայնային ID-ների և կենսաչափական միջոցների օգտագործումից դեպի «ամպային

տեխնոլոգիաների» վրա հիմնված հարկերի հավաքագրման և իրական ժամանակում աուդիտի անցկացման.

4. Նորագույն տեխնոլոգիական միտումները ներառում են՝ «ամպային տեխնոլոգիաների» վրա հիմնված էլեկտրոնային ծառայությունները, ռոբոտացված գործընթացների կիրառումը, վիրտուալ օգնականների (ոգեշնչված արհեստական ինտելեկտի կողմից) և հաճախորդներին արագ աջակցության բջջային ծրագրերի օգտագործումը, հարկ վճարողների փորձի փոխակերպումը և հարկային վարչարարության ծառայությունների մատուցման բարելավումը.
5. Անցումը թվային տեխնոլոգիաներին պահանջում է փոփոխություններ նաև հարկային օրինապահության կառավարման գործընթացներում: Շատ երկրներում հարկ վճարողի ու հարկային մարմնի միջև հաղորդակցություններում, ինչպես նաև հարկային մարմինների ներսում, արդեն իսկ օգտագործվում են նոր տվյալներ, էլեկտրոնային աուդիտի նոր պահանջներ և ավելի մեծաքանակ էլեկտրոնային ֆայլեր.
6. Նոր տեխնոլոգիաների առկայության դեպքում հարկային մարմինները կարող են վեր ածել տվյալները բիզնես ակտիվի, օգտագործել կանխատեսելի մոդելավորումներ, դյուրացնել հարկային կարգապահության պահպանումը և հարկ վճարողների շրջանում սխալների ու խարդախությունի կանխումը, կառուցել կանխատեսելի և ճանաչողական մոդելներ հարկ վճարողների սեգմենտում ռիսկերի վերլուծության համար.
7. Անցումը թվային տեխնոլոգիաներին վերացնում է սահմանները հարկային մարմինների, գործարար համայնքի, տեխնոլոգիական բնագավառի գիտնականների և նոր թվային լուծումներ մշակողների միջև՝ ապահովելով ճկունություն, ինտեգրում, վստահելիություն, անկեղծություն և քաղաքացիական մոտեցում:

2) Բուդապեշտում անցկացված սեմինարի ընթացքում մասնակիցները քննարկել են առցանց ՀԴՄ-ների համակարգերի առանձնահատկությունները, փոխանակել նման համակարգերի ձևավորման և ներդրման փորձը, դրանց օգտագործման ընթացքում առաջացող բարդությունների և առավելությունների վերաբերյալ կարծիքները: Հատուկ ուշադրության է հատկացվել առցանց ՀԴՄ-ներից ստացվող «մեծ տվյալների» հոսքի առավել արդյունավետ օգտագործման եղանակների հայտնաբերմանը:

Վեհաժողովի և սեմինարի եզրահանգումներն ու առաջարկները կարտացոլվեն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատանքային ծրագրերում:

9. Գործուղվող

Միքայել Փաշայան

10. Ստորագրություն, ամսաթիվ

2 հուլիսի 2018թ.